

ՀԱՄԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Մանուկները պարտաւոր են սիրով ու գուարթութեամբ հպատակիլ իրենց ծնողներուն, ուսուցիչներուն, եղբայրներուն կամ խնամածուններուն բոլոր հրահանգներուն՝ առիթ չտալով անոնց գայրոյթին: Որովհետեւ շատ վտանգաւոր է բարիք կամեցող ու առաջնորդող ծնողներուն, ուսուցիչներուն, եղբայրներուն եւ կամ այցելուներուն կամքին հակառակիլ: Մանկական տարիքը ընդունակ չէ ինքնուրոյն կերպով իր օգուտը խորհելու եւ կատարելու: Ուստի գաւակները թող սորվին հնազանդ ըլլալ իրենց ծնողներուն, որպէսզի իրենց որդիներն ալ իրենց հնազանդին, որովհետեւ ինչ որ ցանես՝ նոյնը կը հնձես:

«Ինչպէս մէկ մարդու անհնազանդութեամբ բոլորը մեղաւոր եղան, այնպէս ալ մէկ հոգիին հնազանդութեամբ բոլորը պիտի արդարանան» (Հռոմ. 5.19):

(Տիրոջ սիրոյն՝ հնազանդեցէ՛ք բոլոր մարդկային իշխանութիւններուն Ա.Պետ. 2.13):

ՎԵՐՋ

Անոնք՝ որ կը փափաքին ճրագը Ե-նամակով (E-mail) ստանալ, բարեհաճին իրենց անունը ուղարկել հետեւեալ հասցէին՝ jerak@live.com

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԻՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ


ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՇՏԵՒԱՆՔՆԵՐ

ՍՐԱՄՈՂԾՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Սարսափելի է, երբ գէշ մտածումները այնպէս կու գան, որ կարծես մէկը ականջիդ շնչացեր է: Յատկանշական է, որ անոնք աւելի յաճախ կու գան՝ երբ մարդս կ'աղօթէ Աստուծոյ, կամ Աստուածաշունչ կը կարդայ, կամ եկեղեցիին մէջ ուշադրութեամբ Աստուծոյ խօսքը կը լսէ: Սատանան յաճախ չար մտածումներով կ'այցելէ այդպիսի մարդոց, եւ անոնք ստիպւած կ'ըլլան ձգելու եկեղեցի, Աստուծոյ խօսքին ընթերցումը, կը դադրին աղօթել, պարգապէս որպէսզի սրբապիղծ մտածումները զիրենք չտանջէ: Ատով իսկ թշնամի կը հասնի իր նպատակին, քանի որ Աստուծոյ որդիները կը դադրին իրարու հետ, ինչպէս նաեւ Աստուծոյ հետ հաղորդակցել: Չուզելով Կենդանի Աստուծոյ հետ շփում ունենալ, անոնք աստիճանաբար աւելի եւ աւելի վար կ'իջնեն եւ ի վերջոյ խաղալիք կը դառնան խաւար ուժի ձեռքը:

Ահագոյն, սրբապիղծ մտածումները անմիջական հետեւանքն են հմայողներու հետ ունեցած կապին: Եթէ այսպիսի մտածումներ կը համակեն մարդը, անսխալ կերպով կարելի է ըսել՝ որ անոնք դիմած են բուժակներուն, եւ ատոր հետեւանքով ալ շղթայուած են Սատանային կողմէ...:

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 24 ՅՈՒՆԻՍ, 2012 ԹԻՒ 26

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՆՈՍԻ 12.38-45

Այն ատեն օրէնքի ուսուցիչներէն եւ փարիսեցիներէն ոմանք ըսին Յիսուսի. «Վարդապետ, կ'ուզենք որ հրաշք մը գործես»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ անհաւատարիմ չա՛ր սերունդ. նշան մը կ'ուզէք. բայց Յովնան մարդարէին պատահած հրաշքէն զատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը Նինուէցիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

«Երբ չար ոգի մը գուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. "Ելեմ եղթամ իմ տունս, ուրկէ ելայ": Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ զայն կը գտնէ պարապ, մաքուր եւ յարգուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէ՛ք որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:

ԽՐԱՏ՝ ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ ՀԱՒԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Հաւատքը մարդուն սրտին մէջ արմատացած տունկ է, որուն արմատը՝ Հայրն է, արմատին վրայ գտնուող ոստը՝ Որդին է, տունկին եւ ոստին վրայի անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են. որովհետեւ պտուղը արմատէն, ոստէն եւ ծաղիկէն կը յառաջանայ, ինչպէս բարի գործերը՝ հաւատքէն: Ինչպէս որ ծառը առանց պտուղի գեղեցիկ չերեւիր եւ առանց ծառի պտուղ չըլլար, նոյնպէս հաւատքը առանց գործի վայելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց ճշմարիտ եւ ուղիղ հաւատքի:

**ԳԻՏ ՆՇԽԱՐԱՑ ՍՐՔՈՅ
ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ
ԼՈՒՍԱՒՈՐՉԻ**

Ս. Գրիգոր Լուսավորիչ, լման քառորդ դար մեծ արդիւնաւորութեամբ կառավարել է ամրացնել եւ Հայոց եկեղեցին, փոխադրուեցաւ առ Աստուած 326-ին՝ իր առանձնացումի շրջաններէն մէկուն ընթացքին եւ ոչ ոք լուր ունեցաւ իր մահէն: Հովիւներ՝ գտնելով անոր մարմինը, թաղեցին զայն առանց գիտնալու, թէ որո՞ւն մարմինն էր: Տարիներ յետոյ յայտնուեցաւ անոր թաղման տեղը եւ նշխարները ու մեծ հանդէսով փոխադրուեցաւ ու թաղուեցաւ Թորոսի աւանը:

Հայաստանեայց եկեղեցին ներկայիս երեք անգամ կը կատարէ Սուրբին յիշատակը.

- 1.- Չարչարանաց եւ Մուսնի վերայ անուկով՝ Մեծ Պահոց Զ. Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը:
 - 2.- Ելն ի Վիրապէն՝ Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի կանխող Շաբաթ օրը:
 - 3.- Գիւտ Նշխարաց՝ զկնի Հոգեգալստեան Դ. Կիրակիի նախորդ Շաբաթ օրը:
- Երեք տօներն ալ ունին իրենց նախընթաց շաբաթապահերը: Օտար եկեղեցիներ կը տօնեն զայն Սեպտեմբեր 30-ին:
- Ըստ Տօնացոյցին այս տարի Գիւտ Նշխարաց տօնը կը գուգադիպի Շաբաթ՝ 24 Յունիս, 2012-ին:

**ՀԱՐՑՈՒՄ-ՊԱՏԱՄԽԱՆ
ԲԱԺԻՆ**

**Քահանային կամ Սարկաւագին
Ս. Աւետարան Բարձրացնելը
ի՞նչ կը նշանակէ:**

Քահանային կամ Սարկաւագին կողմէ Ս. Աւետարանին վերաբերուիլը կը նշանակէ Աստուծոյ գահին առջեւ կեցող Սերովբէին ղէպի Ս. սեղան երթալուն, այնտեղէն ունելիով կրակի կայծը առնելուն եւ զայն բերելով Եսայի մարգարէի շրթունքներուն ղպցընելուն (Ես. 2.6-7): Սերովբէին օրինակով, սարկաւագը Ս. սեղանէն կ'առնէ Աւետարանը եւ համբուրել կու տայ օրուան ճաշու գիրքը կարդացող ղպիրին, որպէսզի ան սրբուի Աստուծոյ խօսքին զօրութեամբ եւ համարձակ ըլլայ Տիրոջ պատգամները հաղորդելու:

Ս. Աւետարանը բռնելու համար գործածուող շղարչը կը խորհրդանշէ Սերովբէի ձեռքի ունելին: Ինչպէս որ Աստուծոյ սեղանէն առնուած կրակի կայծին հպումը սրբեց Եսայի մարգարէն, նոյնպէս ալ Աւետարանին լոյսը կը մաքրէ հաւատացեալները ու կը զօրացնէ անոնց հաւատքը:

Ս. Աւետարանին բարձրացուելով վերաբերուիլը կը նշանակէ նաեւ Քրիստոսի կատարած փրկագործութեան խորհուրդի բարի լուրի քարոզութեան ու տարածումին՝ համայն աշխարհին:

ԱՌԱԿ

Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, խելացի են բոլոր անոնք, որոնք այդ իմաստութեամբ կ'ապրին իսկ զգօնութեան սկիզբը՝ բարեպաշտութիւնն է Աստուծոյ հանդէպ, բայց ամբարիշտները կ'անարգեն իմաստութիւնն ու խրատը (Առակաց 1:7):

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ
ՆԱՄԱԿ ՓՈԽ ԳՐԱՄԻ ԵՒ
ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ**

Անօրէն եւ չար մոլութեան տէր մարդը, փոխանակ տոկոսներէն երկիւղածութեամբ հեռանալու, մեծ ցանկութեամբ կը մտերմանայ տոկոսներու շահին հետ, որը կը ցրուէ իր ուշադրութիւնը, որպէսզի արհամարհէ Աստուծոյ պատուիրանը, կը շփոթեցնէ սիրտը, որպէսզի ահեղ դատաստանի օրը չյիշէ միտքը այնպէս մը կը քարացնէ որ չգթայ իր եղբորը հեծեծանքին վրայ, կը փակէ ականջներն ու աչքերը ու զինք դիտողներու արհամարհանքէն չ'ամչնար այլ թշուառ հոգիին համար համարձակ կերպով յաւիտեանական հուր կը հաւաքէ եւ կը դիզէ: Եւ ինչպէս որ երկրագործները կ'աղօթեն եւ կ'աղերսեն Աստուծոյ, որպէսզի անոնք տեղայ ցանուած սերմերուն վրայ, նոյնպէս ալ վաշխառուն, աղքատութիւն, նեղութիւն եւ սով կը ցանկայ բոլորին, որպէսզի տրուած դրամի տոկոսին փոխարէն, մարդոց ստացուածքներուն տիրանայ: Դրամը փոխ տուած ժամանակ գուարթերես է, իսկ երբ տոկոսի պայմանաժամը հասնի եւ նկատէ պարտապանին աղքատութիւնն ու շփոթանքը, անգուր կը դառնայ, աղաչողին երդումին չի հաւատար ու նեղութեան մէջ գտնուողին աղերսանքին երբեք զիջում չի կատարեր, այլ կը դառնայ անողոք ու անզիջող եւ պարտապանը կը նկատէ որպէս իր ծանոն: Կը բննէ, գիտնալու համար թէ [պարտապանը] ինչ ինչքեր ունի, որոնք կրնան իրը ըլլալ. կը հետազօտէ թէ ուր տարած եւ պահած է գանձով. բազմութեան մէջ կը նախատէ, սիրելիներուն մօտ կ'ամչցնէ եւ հանրութեան մէջ կը չարչարէ:

(Ճառեր Յովհան Մանդակունի)

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

**ԱՍՏՈՒԱԾ
ՀԱՄԱՏԱՑԵԱԼՆԵՐԸ ԿԸ
ՓՐԿԵ ԻՐԵՆՑ
ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

1.- *Ձեզի մարդկային փորձութենէն գատ ուրիշ բան չէ պատահած. բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու, որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերել: (Ա. Կորնթացիա 10:13)*

2.- *Ուստի, եղբայրներ, քանի որ Աստուած ա՛յնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ, կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք, որպէս կենդանի զոհ մը իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը: (Հռոմ 12:1)*

3.- *Տէրը գիտէ աստուածապաշտները փրկել իրենց փորձութիւններէն: (Բ. Պետրոսի 2:3)*

Երանի՛ այն մարդուն որ կը տուկայ փորձութեան, որովհետեւ փորձութենէն յաղթական դուրս եկողը որպէս մրցանակ պիտի ստանայ այն կեանքը, որ Տէրը խոստացաւ տալ զինք սիրողներուն: Բայց փորձութեան մէջ եղող ոեւէ մէկը թող չըսէ՛ թէ Աստուած է որ զինք կը փորձէ, որովհետեւ Աստուած մասնակից չէ փորձութիւններուն որոնք չարէն կու գան, ո՛չ ալ ինք մարդիկը փորձութեան կ'ենթարկէ: Իւրաքանչիւր մարդ կը փորձուի իր իսկ ցանկութիւններէն տարուելով ու խաբուելով:

Կարդալ նաեւ՝ Յակոբոս 1:2-18

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
1.21-31**

ԻՆչպէս պոռնիկ դարձաւ Սիոնը, հաւատարիմ քաղաքը. ան՝ որ օրինապահութեամբ լեցուն էր. ուր ատեն մը արդարներ կը բնակէին, մինչ հիմա մարդասպաններով բնակուած է:

Անարժէք է արծաթը, ո՛վ երուսաղէմ, ապօրինի շահուած. վաճառորդներդ ջուր կը խառնեն գինիին:

Իշխաններդ ինծի դէմ ապստամբած՝ գողերուն գործակից դարձեր են. կաշառք կը սիրեն եւ անիրաւ նուէրներու հետամուտ են. ո՛չ որբերուն իրաւունքը կը պաշտպանեն, ո՛չ ալ այրիներուն դատը կը լսեն:

Ուստի այսպէս կ'ըսէ մեր Տիրակալը, Երկնային Չօրքերու Տէրը, Իսրայէլի Յօօր Աստուածը.- «Վա՛յ ձեզի, Իսրայէլի՛ իշխաններ, որովհետեւ բարկութիւնս պիտի թափեմ ինծի հակառակողներուն վրայ, եւ վրէժխնդրութեամբ պիտի դատեմ ինծի թշնամացողները:

Ես ինքս քու մաքրութեանդ պիտի ձեռնարկեմ, եւ ինչպէս հալոցով մետաղը կը գտեն՝ այնպէս ես իմ կրակովս պիտի մաքրեմ քեզ. կորուստի պիտի մատնեմ ապստամբներդ, պիտի բնաջնջեմ բոլոր անօրէններդ, եւ բոլոր ամբարտաւանները պիտի խոնարհեցնեմ:

Շարունակել Աստուածաշունչէն

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՅՈՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ**

7.25- -8.11

Ապա ուրեմն ես ինքս միտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին:

Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք, որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ հոգեւորապէս: Որովհետեւ Յոգիին օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բռնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց աշխարհ զրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանչական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմնին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի մենք որ հոգեւորապէս կ'ապրինք եւ ո՛չ մարմնաւորապէս, կարենանք լրիւ գործադրել օրէնքին արդար պահանջները: Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը ղեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Յոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՄՍՏՈՒՄԾՄՇՈՒՄԸ:**